№ 57 Մարտի 28 (Ապրիլի 9) 1881 Մարտի 28 (Ապրիլի 9) № 57

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրագրացիր գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանչիր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Քաղաքական տեսութիւն։ Ապահարզանի օրէնքը Ռուսդարիայում։ Ցունաստան։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ցիշատակարանների նշանակութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Մարտի 18-ին

Մեր քահանաները, առհասարակ, կարծես իրանց պարտք են համարում քարոզներ խօսել միմիայն մեծ պասի կիրակի երեկոներին, իսկ տարվայ մնացած ժամանակ իրանց աղատ են կարծում իրանց հօտին բարոյական խրատներ տալուց։ Այդ միջոցները նրանք պարապում են միայն մկրտութեամբ, պսակադրութեամբ և թաղումներով, իսկ ժողովուրդը ինչ է անում, բարոյականութեան որ ասպիճանի է հասած,—դա նրանց հոգը չէ։ Մեր Ախալքալաքը ունի այժմ 9 քահանայ, որոնցից 7 ծխատէր և և 2 անծուխ։ Այս քահանաներից երկուսը երկրորդ մանկութիւն մտած լինելով, ոչինչ սպասելու չենք կարող նրանցից։ Իսկ մնացածներից ուշադրութեան արժանի են հետեւեալները։

Խ. աւագ քահանայ Բարսեղեանց, որ լինելով Ախալքալաքի և Ծալկայի հոգեոր վիճակի գործակատար, իր պաշտօնական նշանակութեամբ բաւական օգուտներ է տալիս մեր երկսեռ զպրոցներին։ Վերջին ժամանակներս նրա խնդիրքով վեհ. Հայրապետը բարեհաճել է յատկացնել իւրաքանչիւր տարի 1000 բուբլ մեր երկսեռ ուսումնարաններին կարգախ, Սուլտա և այլ եկեղեցական գիւղօրայքի արդիւնքներից, այնպէս որ այդ գումարով մեր ուսումնարանները կարելի է համարել ապահոված։ Երկրորդն է Ս. քահանայ Առվանեանց, որ իր բժշկական մասնաւոր հմտութեամբ՝ ամեն ժամանակ պատրաստ է նեղեալներին օգնելու և դրանով ամբողջ Ախալքալաքի դաւառի հասարակութեան սէրն է գրաւել։ Երրորդն է Ս. քահանայ Դէմիրճողլեանց, մի ուսումնական և աշխոյժ երիտասարդ, մեր երիտասարդութեան պարագլուխ, մեր յայտնի քարոզիչ, թատրօնական գործում աշխատող, միշտ գրականութեամբ պարապող։ Զը նայելով որ քաղաքիս մի քանի աղաները նրան հալածում են, բայց նա իր եռանդը չէ կորցնում։ Սա ամսիս 15-ին մի դեղեցիկ քարոզ ասեց գերեզմանոցների մասին, համեմատելով եւրօպական գերեզմանոցները մերերի հետ։ Եւրոպացիները, ասեց քարոզիչը, իրանց գերեզմանատները պահում են ոչ թէ միայն շատ մաքուր, բայց և զարդարում են ծառերով, այլ և այլ տունկերով և ծաղիկներով, այնպէս որ Եւրոպայում, մանաւանդ Գերմանիայում, գերեզմանոցը կատարեալ պարտէզ է, դրախտ է։ Իսկ մեր գերեզմանոցները կարծես աղբանոցներ լինեն, որտեղ մենք քաղաքի ամենայն տեսակ անմաքրութիւն ենք լցնում, չը նայելով որ մեզանից իւրաքանչիւրի սիրելին այնտեղ է պառկած։ Այդ անմաքրութեանը առաջն առնելու համար, երիտասարդ քահանան առաջարկեց պարապատել գերեզմանոցները։ Այդ առաջարկութիւնը ուրախութեամբ ընդունվեցաւ հասարակութենից և շատերը իրանց նուէրներով դիմում են քահանային։

Վերջապէս չորրորդ քահանան Յ. Քաջազնունի է, որից հասարակութիւնը շատ սպասելիքներ ունէր, քանի որ նա դեռ քահանայ չէր, բայց մեր յոյսերը մնացին ապարդիւն։

Այժմ մի երկու խօսք մեր կլուբների և զաւվեխանաների մասին։ Այդ հիմնարկութիւնները միայն մի նպատակ ունեն. տարածել ժողովրդի մէջ ոչ դէպի թղթախաղը։ Ով որ անդամ չէ կլուբի, շատ անգամ թուղթ խաղալ չը գիտէ, բայց հէնց որ գրվում է կլուբի անդամ, ստիպված սովորում է թղթախաղը։

Բացի քաղաքային կլուբից և մանր մունր զաւվեխանաներից, կան այնպիսի տեղեր, որոնք այլ և այլ անուններ են կրում, ինչպէս օրինակ «черный клубъ» կամ «картежная контора» որտեղ թէ քաղաքային կլուբի անդամները և թէ զանազան հարստահարող աղաները չը բաւականանալով քաղաքային կլուբի մէջ թղթախաղով, ամբողջ գիշերներ են անցնում անագին գումարներով թուղթ խաղալով և միամիտներին կատարելապէս կողոպտելով։

Ի՞նչ սպասել կարող է խոստանալ այն հասարակութիւնը, որի հարուստ և ստուգանի շրջանից սկսած մինչև ստորին դասը իրանց ամբողջ կեանքը նուիրում են թղթախաղին։ Եթէ մի օտարական այցելելու լինի մեր քաղաքը, չը գիտեմ ինչ զաղափար պիտի կազմի մեր վրա։ Նա մեր տեղը կամաչի, իսկ մենք ամաչելու ընդունակութիւնը կորցրած ենք արդէն։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, մարտի 10-ին

Մենք ճանաչում ենք մի պարոնի, որը հինգ տարի չարունակ տանջվելով աչքերի հիւանդութիւնից, որի մէկ աչքը սպիտակ թաղանթով էր ծածկված, իսկ միւսը կորճատես էր, փորձել էր շատ տեսակ դեղեր, թէ Թիֆլիսի և թէ գաւառական բժիշկների, բայց բոլորը անցել էին անօգուտ, և մինչև անդամ վնասակար։ Որպէս զի ընթերցողը լաւ համոզվի մեր այս ասածների վրա, մենք աւելորդ չենք համարում յիշել այստեղ Թիֆլիսի այն բժիշկների անունները, որոնց դեղերը ընդունած է յիշեալ պարոնը։ Սրանք են՝ Բլիմբերգ, Բլօրձէն, Մալինին, Թամամշեան և վերջը Բէյլ, բայց և ոչ մէկը սրանցից չէր կարողացել օգնել նրան։ Վերջապէս յիշեալ պարոնը ստացաւ կատարեալ առողջութիւն մէկ պարսիկ—բժշկից։

Մենք ինքներս պատիւ ունեցանք նորերումս ծանօթանալու սոյն բժշկի հետ, և ինչպէս ինքը հաւատացնում էր, նա եղել է երբեմն ուսանող Կայիրէի (Եգիպտոսում) ճեմարանում, մանմետականութեան այդ ամենաբարձր միակ ուսումնարանում, որտեղ նա առաւելապէս ուսումնասիրել է արաբական գրականութիւնը, և չը նայելով, որ մահմետական կրօնը արգելում է բժշկութիւն սովորել, նա հետամուտ է եղել առանձնապէս և ուսումնասիրել է բժշկանութիւն, հին գրուածքներից, որի պաշտօնը այժմ նա վայելում է ակնաբոյժ դեղերի իր գիտով։ Բայց Թիֆլիսը բաղդ չունեցաւ երկար ժամանակ վայելելու սորա օգուտները։

Սորանից մի քանի օր առաջ գնացի դարձեալ նորան տեսութիւն, և տան դռները փակված գտայ։ Հարց ու փորձ արի և տեղեկացայ, որ Թիֆլիսի բժիշկներից ոմանք լսելով նրա յաջողակ բժշկութիւնը, զանգատվել են և ոստիկանութեան միջոցով յափշտակել են նորա տանից պատրաստի ունեցած մի քանի դեղօրայքը, իրան ևս սպառնալիքներ կարդալով չարաչար պատիժների ենթարկել։ Պ. պարսիկ-բժիշկն անծանօթ լինելով տեղական կանոններին և սաստիկ վախենալով այսպիսի տարօրինակ երեոյթից, թողել է իր բոլոր ունեցածները և փախել է։

Ինձ հետ միաժամանակ եկել էին նորա տուն և բաղմաթիւ աչքի հիւանդութիւն ունեցողներ, ոմանք նորեկներ և ոմանք նորա դեղեր ընդունողներ, որոնք մնացին թերի և յուսահատութեամբ յետ դարձան։

Զը մոռանանք յիշելու, որ յիշեալ պարսիկ-բժիշկը իր այստեղ եղած ժամանակ ինձ յայտնել է, որ մտադիր է իր ակնաբոյժ դեղերը ներկայացնել Ռուսաստանում մի որ և է բժշկան ընկերութեանը և յայտնել գաղտնիքը, միայն այն պայմանով, որ եթէ յարմար դատվի, իբրև վարձատրութիւն, իրան ևս թոյլ տան յայտնի կերպով բժշկութիւն անելու, իր դեղերով։ Բայց աւաղ. նախ քան թէ այս բարի մտադրութիւնը կիրագործվէր, Թիֆլիսի նախանձախնդիր բժիշկներից մէկ քանիսը, ոչնչացրին նորա բարենպատակ դիտաւորութիւնը, մի և նոյն ժամանակ զրկելով բժշկական գիտութիւնը (գոնէ Ռուսաստանում) մի այսպիսի նշանաւոր գիւտից։ Մոռացանք յիշելու, որ պ. պարսիկ-բժիշկը աչքերի մէջ եղած սպիտակ թաղանթը առողջացնում էր միայն դեղերով, առանց օպերացիայի, որը շատ անգամ վատ հետանքներ է ունենում։ Ահա այսպէս են մեր պ. պ. բժիշկները. իրանք չը գիտեն, ուրիշից էլ չեն կամենում օգուտ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՆԻ

—

—Չորս հազար դար սահել անցել են մեր գլխէն. դժոխաջուր հեղեղների ենք հանդիպել, և դարձեալ մեր չունչն ազատել. մեր յաստուկ արեան բաղանիքների մէջ մեզ լողացուցել են մեր թշնամիք, բայց և այնպէս կարողացել ենք այնքան արիւն պահել մեր երակների մէջ՝ որ անցած գնացած բարբարոսների ճակտին սեւութեան դրոշմը դնենք և յաջորդող մարդասէր ու քաղաքակիրթ սերունդների առջև մեր թափած արիւնովը պարծենանք։ Ուզեցել են մեզ մեռցնել, ապրել ենք. ուզեցել են նուաստացնել, ազնուացել ենք. բովերի մէջ են դրել խանձելու և ըսպառելու համար, իբրև ոսկի զտուել ենք։ Մեզ յաղթողների և ոտի տակ առնողների վրա դամբանական ենք կարդացել. իսկ եթէ մեզ յաղթողը նոսա մեզ հետ երկար ապրող է եղել, մենք միշտ իւր առջևէն ենք գնացել՝ թէ կռուի դաշտում թրով, թէ խաղաղութեան գրկում խելքով։—

Սոքա խօսքեր չեն, այլ իր են եղել. թերահաւատները թող աւելի հուպ մատչին իրենց ազգի յիշատակարանները ուշիուշով քննելու։

Ի՞նչն է կարողացել վեր պահել մի փոքր ազգ այնքան բազմաղիմի փորձանքների մէջ, այնքան ահեղասաստ աշխարհակործան ամբոխմունքների առջև։ Մենք ասում ենք Աւանդութիւնն և Յիշատակարան։ Գեղեցիկ և դիւցազնական սկիզբն ազգութեան, բաբելոնեան աշտարակէն սկսիլ. ուր մարդիկ—տիտաններ—ահեղութեամբ ու մեծազօրութեամբ աստուածների հետ են ուզեցել մրցել, երկիրը երկնի հետ են ուզեցել միախառնել, հսկայագործ աշտարակի բարձրէն կամեցել են դիւաշունչ մրրիկների և հեղեղների խուլ մռնչիւնը իրենց ոտի տակէն լսել։ Այդտեղէն են եկել հայերը, վսեմափառ Մասիսի հանդէպ կանգ են առել, աչքերը մինչև երկինք են վերուցել իւր ամպածրար գագաթը տեսնելու համար. լեռան խորհրդաւոր ահեղութիւնը լցել է նրանց սիրտը պաշտելի երկիւղիւ. նորից են վերուցել աչքերը, և այդ անդամ մի անուշկապոյտ երկնքի տակ ոսկենոյլ լուսով վառվռում պսպղում է Արարատի ձիւնափայլ գլուխը. լուսաթաղ ոսկեզօծ լեռը զմայլեցուցել է նրա սիրտը, հարբեցուցել։ Եւ այդտեղ է սկսել հայոց դիւցազնական վիպերգութիւնը, այդտեղ է սկսել նոցա քնարերգութիւնը։ Այնտեղէն Անահտայ պաշտօնը, այնտեղէն Ատրզկան երկրպագութիւնը։ Եւ այդ ազգը իւր գլուխն ունէր Հայկ, ապա Արամ, ապա Տիգրան իւր Վահագնով։ Ով ուզում է իմաստ ծախել, թող ասէ թէ այդ դիւցազունք առասպելի ծնունդ են. իսկ ինձ թող թոյլ տրուի պաշտել Հայի հանճարն ու խանդը, որոնք իմաստով բեղմնաւոր վէպեր են հիւսել. Հայկ՝ ազատութեան դիւցազն և ազգապետ, Արամ հայկատեսակ և հայրենեաց պաշտպան, Տիգրան Հայկարամանման և հայրենեաց չինող։ Ուրեմն ազատութիւն, հայրենիք, և աշխարհաշինութիւն։ Այդ կրօնքով սկսել են մեր նախնիք իրենց կեանքը. այդ երրորդութեան են զոհ մատուցել մեր նախնիք իրենց արիւնով։ Ժառանգութիւն ստանալ այդպիսի մի կրօն, ուր բազում քաջեր եղել են քահանայապետ, արդարև աղբիւրն է այսքան հազարամեայ կեանքի։ Սիրել հողը, սիրել անձնիշխանութիւնը, սիրել ընկերշինութիւնը, այդ է կեանքի նպատակը, այդ է բոլոր կեանքը։ Հառաչել հողի կարօտով, հառաչել անձնիշխանութեան կարօտով, հառաչել ընկերշինութեան կարօտով, այդ է եղել հայի հառաչը իւր դաժան բաղդի օրերում, այդ է եղել գրականը մի լաւագոյն բաղդի տակ վերածնուելու համար, այդ է եղել այնքան տառապանքների մէջ նրա չունչն անմահ պահող զօրութիւնը։ Իւր նախնիք մի տաճար էին կանգնել և դարերի շրջանում իրենց թրով նոյնը պաշտպանել և իրենց արիւնով նոյնը օծել. ինքը այդ տաճարին հաւատարիմ երկրպագու է մնացել, և կործանուելէն վերջն էլ իւր սրտի խորքում է անկործան պահել նրա յիշատակը և այնտեղ է երկրպագել իւր նախնեաց աստուածներին։

Ո՛վ Իսրայէլ, դու ևս ամեն բան կորուսիր. քու Երուսալէմդ, Սոլոմոնի Երուսալէմը, երկրի երեսէն ածիլուած է. բայց մի գիրք կայ՝ ուր քու դատաւորներդ ու մարգարէներդ են խօսել Սինայի հանդէպ, Յորդանանի ափանց վրա, բաբելոնեան ուռիների տակ. դու ունիս այդ գիրքը, այդ տիեզերական դարձած գանձը, և դու ապրում ես, թէև գրքիդ պէս ինքդ էլ՝ հայրենիքդ դուրս՝ տիեզերքում ցրուած ես։

Եթէ հայի ականջները անդադար լսում են իւր քաջերի աւանդութիւնքը, աչքերն էլ տեսնում են նրանց մեծագործութիւնքը։ Նայեցէք միայն այս Անին։ Նայէ, ով ժողովուրդ. սիրտ կը բարձրանայ, հոգիդ կաղնուանայ, արժէքդ կը մեծանայ, և կը տեսնես որ արհամարհուելու մարդ չես. թէ թղուկ էիր քեզ կարծում, տես որ հսկայ ես. գէթ հսկայի որդի։ Նայէ այստեղ, այս կախարդական տիպ մէջ, այս հրաշագործ ապակիների մէջով։ Պարոն Քիւրքճեանը քեզ Անին է ցոյց տալիս։ Ի՛նչ ահագին պարիսպներ, երկկարգ բարձրաբերձ պատեր, մեծագործ՝ արուեստակերտ աշտարակներ, բոլորը սրբատաշ՝ կարծես թրաշուած. նայէ հանդէպդ այդ առիւծը, զօրութեան և վեհութեան նշան. նայէ ուշադրութեամբ պատի մէջ հիւսուած խաչը—ճարտարագործը շարելու ժամանակ քարերի հետ խաղացել է,—այդ խաչի զօրութեամբ (ասենք, այո) նաև մինչև այսօրս հասել ենք։ Մի մոռանար քննել պատերի երեսի փոքրիկ ծակտիքը. թշնամեաց նետերի տեղուանքն են. ինչ անչնչան վէրքեր, լուի խածուածքներ. հաւատա որ եթէ համայն դժոխք մեր դէմ արձակուած չը լիներ—մէկ կողմէն արաբը, միւսէն յոյնը, երրորդէն թաթարը, չորրորդէն լեռների աւազակները—այդ մեծամարմին և ահեղ պատերը իրենց չինութեան նպատակին լիապէս ծառայած կը լինէին։ Նայէ այս անկիւնէն, արևմուտքէն դէպ արևելք, նայէ դրսէն՝ նայէ ներսէն, տես այդ տողանը, այդ երկայն շղթան, այդ պատերի ու աշտարակների կարավանը. օդը աչքիդ առջև՝ հեռաւորութեան մէջ՝ ծաւալ ու ծուփ խաղում է, գնում է. պատերը երթալով հեռանում, բարականում, ցածանում, իջնում ու կորչում են Ախուրեանի ձորի

քաղել։ Ժողովրդական և գիւղական հասարակ դեղերը, փոխանակ ուսումնասիրելու և աւելի օգտաւէտ դարձնելու, բոլորովին ոտնակոխ են անում նրանց, մինչդեռ յայտնի է, որ բժշկական ամենաբարձր գիտութիւնը ուսումնասիրում է և յարգում է այսպիսի հասարակ դեղեր, որոնցից շատ անգամ օգուտ է քաղում և անում է այնպիսի գիւտեր, որոնք չեն լսվել համալսարանի ամբիոնից։ «Ինքեանք ոչ կարեն մտանել, և այլոց, որք մտանեն, ոչ թոյլ տան նոցա»։

Կոռնոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 1-ի եղեռնագործութեան տեղի վրա պէտք է կառուցվի մի եկեղեցի, որի շինութեան համար ամբողջ Ռուսաստանում խոշոր նուիրատուութիւններն են հաւաքվում։ Իսկ այն մշտական կամուրջի վրա, որ պիտի շինվի Նէվա գետի վրա, բերդի մօտ դիտաւորութիւն կայ մի արձան կանգնեցնել հանգուցեալ Կայսրի յիշատակին։

—

«Русскій Курьеръ» լրագրին Ս. Պետերբուրգից հեռագրում են, որ սենատը վճռեց որ երդման կարգը Լեհաստանի դատարաններում պէտք է կատարվի ռուսաց և լեհական լեզուներով։

—

«Моск. Вѣд.» լրագրին հաղորդում են Ս. Պետերբուրգից որ պալատական մինիստրութիւնը վերցրած կը լինի և նրա տեղը կազմակերպված կը լինի պալատական վարչութիւնը։ Մի և նոյն ժամանակ այդ մինիստրութեան վրա ծախսվող 17 միլիոն ռուբլու տեղ, կը ծախվի այսուհետև միայն 7 միլիոն լուբլ։

—

Ս. Պետերբուրգի լրագիրները հաղորդում են որ կառավարութիւնը առաջարկել է մայրաքաղաքի մօտ Մարսեան ասված դաշտում գտնված բոլոր բալագանների տէրերին հանել իրանց բալագանները, որովհետև մինչև յունիս ամիսը խորին սուգի պատճառով ոչինչ զուարճութիւն չը պիտի թոյլ տրվի Ս. Պետերբուրգի մէջ։

—

Պ. բժիշկ Նաւասարդեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը։ «Բարեգործական Ընկերութեան յարգոյ հիմնադիրք հրաւիրվում են Արծրունու թատրոն կիրակի, մարտի 29-ին, ժամի 12-ին, Ընկերութեան կանոնագրութեան ծրագիրը ստորագրելու համար։»

—

Աւէքսանդրապօլից մեզ հաղորդում են որ Ղարսի նահանգից եկածները պատմում են որ անյայտ և վարակիչ հիւանդութիւնը այդ նահանգում սաստկանում է օրից օր։ «Վաւ կը լիներ, գրում է մեզ մեր թղթակիցը, որ կառավարութեան հրամանով չուտով ուղարկվին բժիշկներ Ղարսի նահանգը, իմանալու համար թէ յայտնված հիւանդութիւնը՝ ցաւերի ինչ տեսակին է պատկանում և այնուհետև լրագիրների մէջ կամ առանձին բրոշիւրներով բժշկական և առողջապահական միջոցներ և խրատներ տպագրվէին, որպէս զի ժողովուրդը իմանայ թէ ինչպէս իրան պահի և պաշտպանվի յայտնված ցաւի դէմ։»

—

Մեզ գրում են Աւէքսանդրապօլից հետեւեալը։ «Վերջին չարաթներում մօտ 150 տուն մալականներ և դուխոբորներ անցան մեր քաղաքից դէպի Ղարսի նահանգը, որի կիսաւեր գիւղերում նրանք պէտք է բնակվին։ Այդ գաղթականներից, ինչպէս լսեցի, մօտ 100 տուն Զայմում պէտք է զետեղվին։»

—

Մի Թիֆլիսեցի պարոն հաղորդում է մեզ որ մի պարոն մի տարի է արդէն, որ հանդանակել է մի գումար ի նպաստ մի չքաւոր ընտանիքի, որ պէտք է իր հայրենիքը վերադառնար, բայց փողը իր մօտ է պահում մինչև այժմ։

—

Ախալքալաքից մեզ գրում են։ «Այստեղ մի խումբ երիտասարդների մի քանի տարի է արդէն, որ չարունակ, իրանց անձնական գործերը թողած, բարեգործական նպատակով թատրոնական ներկայացումներ են տալիս։ Բայց այսքան տարվայ միջոցում մի օրիորդ կամ մի տիկին չը տեսանք մեր բեմի վրա, չը նայելով որ արդէն 8 թէ 10 տարի է որ ունենք օրիորդական ուսումնարան, որից դուրս եկած օրիորդները գուրկ պէտք է լինեն նախապաշարմունքից։ Ինչ ճաշակ կունենայ թատրոնական պիէսա, որտեղ կանանց դերերը կատարում են այր մարդիկ։ Մենք մեր յոյսը դնում ենք մեր օրիորդական դպրոցի վարժուհի տիկին Ս. Ղարայլանեանցի վրա, որ տեղիս հայ կանանցից ամենահասկացողը և զարգացածը լինելով, կարող է, եթէ ուզենայ, ներգործել մեր մի քանի կանանց կամ օրիորդների վրա, համոզելով նրանց, որ մասնակցեն մեր թատրոնական ներկայացումներին մեր երիտասարդների հետ միասին։»

—

«Порядокъ» լրագիրը հաղորդում է որ թագաւորասպանութեան մէջ մեղադրված Սոֆիա Պերովսկու պաշտպան, Նրա ընարութեամբ լինելու է երդուեալ հաւատարմատար Կեղրին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

„Journal de St.-Petersbourg“ լրագիրը հաղորդում է, որ այժմ քաղաքական աշխարհը զբաղված է ապաստարանի իրաւունքի հարցով, որ տալիս են արևմտեան պետութիւնները, մանաւանդ Շվէյցարիան, բոլոր երկիրների քաղաքական գաղթականներին և յանցաւորներին։ Լրագիրը ասում է հետևեալը։ Մարդասպանների մի խումբ կայ, որ բացարձակ յայտնում է իր սպառնութիւնների մասին և այժմ դիտաւորութիւն կայ զսպել այդ խումբը։ Անկարելի է բացասել այդ խումբի գոյութիւնը, որովհետև նա բացարձակ գործում է և չէ ծածկում իր նախկին գործողութիւնները և ապագայ դիտաւորութիւնները։

Այդ հարցով այժմ զբաղված են եւրոպական բոլոր լրագիրները և մի քանի կառավարութիւններ նշանաւոր կարգադրութիւններ են անում նիհիլիստների դէմ, որպէս զի նրանք պատասխանատու չը լինեն որ և է անցքի համար։

Ինչպէս հաղորդեց հեռագիրը, Ռումինիան նորերում իրան թագաւորութիւն յայտնեց։ Ողջունելով այդ քայլը, վերոյիշեալ լրագիրը յիշեցնում է, որ Ռումինիան պէտք է աշխատի գործունեայ և օգտակար անդամ լինել այն մեծ ընտանիքի, որ անուանվում է միապետական Եւրոպա։ Նա պէտք է բոլոր միջոցներ գործ դնի, որպէս զի երկիրը ապաստանարան չը դառնայ այն միջազգային խումբի, որ սպառնում է գահերին և ժողովուրդների բարօրութեանը։ Ջանազան լրագիրների թղթակիցները գովում են Ռումինիայի ներքին այժմեան կազմակերպութիւնը։ Ռումինիայի բնակիչների բոլոր դասակարգերը ազատ կեանք են վարում և գոհ են իրանց վիճակից։

Ֆրանսիական կառավարութիւնը հանրապետական այժմեան մեծամասնութեան մէջ անմիաբանութիւն չը սերմանելու նպատակով գիջում արաւ Գամբետտային և յայտնեց, որ ընտրողական վերանորոգութեան հարցի առիթով նա չէզոք կը մնայ։ Չը նայելով այդ համաձայնութեանը, նա այնպէս յայտնվեցաւ, որից պարզ երևում է, թէ կառավարութիւնը չէ համակրում ընտրողական վերանորոգութեան գործին։ Յայտնի է, որ Գրեվի և Գամբետտա. ընտրողական հարցի առիթով չը կարողացան համաձայնութիւն կայացնել։ Այժմ Գրեվիի օրգան „Paix“ և Գամբետտայի „Republique Française“ լրագիրները բանակռիւ են սկսել։ Առաջին լրագիրը պաշտպանում է ընտրողական այժմեան ձևը, իսկ երկրորդը խօսում է յօգուտ նոր ձևի։

Անգլիական կալուածատէրերը, որոնք իրլանդացիների չափ ցանկանում են կալուածական օրէնքների վերաքննութիւնը, մասամբ բաւականութիւն ստացան, որովհետև նորերումս համայնքների ժողովին առաջարկվեցաւ կալուածական մի օրինագիծ, որ ընդունվեցաւ ձայների նշանաւոր մեծամասնութեամբ։ Այդ նոր օրէնքի համեմատ երկրագործները իրանց ֆերմաները թողնելու ժամանակ վարձատրութիւն են ստանում իրանց տնտեսական բարելաւութիւնների համար։ Իբրև գործնական մարդիկ, անգլիական կալուածատէրերը լաւ հասկանում են, որ այդպիսի օրէնքը կը դրդէ երկրագործներին բարւոքել իրանց վարձած կալուածների տնտեսութիւնը։

«Polit. Corres.» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ օտար պետութիւնների դեսպանները, առանց թիւրքաց հաւատարմատարների մասնակցութեան, մի ինքնուրոյն առաջարկութիւն են պատրաստում յոյն-թիւրքական վէճը լուծելու համար։ Ասում են, որ թիւրք հաւատարմատարները, տեսնելով, թէ իրանց երկու առաջարկութիւնները չեն ընդունվում դեսպաններից, իրանք խնդրել են մի ինքնուրոյն նախագիծ կազմել։

ԱՊԱՀԱՐԶԱՆԻ ՕՐԷՆՔԸ ՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

—

Այս օրերս ունգարական մինիստրութիւնը պատգամաւորների ժողովին ներկայացրեց մէկ օրինագիծ քաղաքական ամուսնութեան մասին։ Մեր ընթերցողների համար հետաքրքիր կը լինի ծանօթանալ այդպիսի մի նախագծի հետ, որը պարունակում է իր մէջ։ Ինչու այդքան զարմանալի ջանք այդ միլիոնաւոր քարերը սրբատաշ անելու համար, մինչ փոքր ինչ անկոկ ժայռերն էլ կարելի էր իրար հետ մածուցանել մի և նոյն նպատակի համար։ Երևի ուժը վայրենութեան հետ չեն ուզեցել տեսնել Բազրատունիք, գեղեցկութեան հետ զուգել են։

Մտիր այդ ահագին դռներէն ներս. աչքիդ զարկածը տխրեցնող՝ բայց հիացնող է. սակայն մի այլ զգացմունք աւելի յարձակվում գրաւում է սիրտդ. այս գեղաշիտակ պատի, այն երկնանման գմբէթի, միւս հրաշարուեստ քանդակի առջև կանգնածդ պահին մի գողտրիկ հաճոյք սողոսկվում է սրտիդ խորշերի մէջ. թէև աւերակ, բայց մեծութեան ու փառաւորութեան յիշատակներ են այդ կիսափուլ արձանները. ահեղ զօրութիւն, վսեմ բանաստեղծութիւն է այդ քարերի մէջէն ղղացուածն ու լսուածը. ճարտարագործի մուրճի տակէն յառաջ եկած ներդաշնակութիւնը այդ յաւերժագեղ սիւների, վսեմաշուք կամարների, երկնախորան գմբէթների, վեհամբարձ սրածայր կամոզիկէների հետ և նրանցից բարձր բարձրանում է դէպի յաւիտենականութեան ծոցը, դէպի աստեղների անմահ ներդաշնակութիւնը։ Տես այս մայրը, դա Անուայ կամոզիկէն է. եթէ երևակայութիւնդ այստեղ չը խաղայ, այլ ուր կարող է խաղալ. տես այդ մայր թագուհին իւր պատկառաշուք գահի վրա, կանգնած է. բոլոր արքունիքն և ազատագունդ ու ժողովուրդ նրա առջև, ներքևում, ծունր դրած են. իւր հասակն յաւերժական է, պատմուճանն՝ որ ունի վրէն՝ երկնագեղ կապոյտ է և վարագուրում է ամենայն մոգութեամբ լի հրաշատեսիլ անդամները, որոնց մէջ հրապոյր և վեհութիւն իրար հետ չաղկապուած զարանուած կան. գեղակամար յօնքերի տակ, մետաքսանման արտանոների մէջ, այդ նըշաձև կախարդաչէն ծովակների ծոցում, երկնային՝ աստեղեայ ծիածաններ են խաղում. ճակատը, սուրբ և գողտրիկ խորհուրդների այդ գահը, անմահ է. ապա վարսակալի տակ հեղիկ ամփոփուած և ձիւնափայլ ողորկաչէն ուսերի վրա ծփուն մազերը—կախարդութիւնն արդեօք ստեղծած է մի այլ դիւթարուեստ ցանց Սէրերը գրաւելու կամ թրթռուն Զմայլքները ըմբռնելու համար։—Թագուհին պիտի խօսի. իւր վարդաթերթիկ շրթունքներէն, մարգարիտների միջէն հոսելով, մի մեղրածորան աղբիւր է սպասվում։ Այդպէս է մայր թագուհին կամոզիկէ։ Արդէն խօսում է. լսում ես. մի յաւիտենական ներդաշնակութիւն մրմնջում է սրտիդ ու մտքիդ թելերի մէջ։

Նայէ այս կողմը. սա սուրբ Լուսաւորչի կամոզիկէն է. իսկոյն սիրտդ խլում է քեզանից. կարծես չէիր սպասում այդպիսի մի գեղեցկութիւն տեսնելու։ Թէ ուզում ես, դա մի երիտասարդ է, աղուամազը ծնօտներին դեռ նոր բուսած. բոլոր անդամներովը զրահաւորուած է, ամրակուռ թեթև սաղաւարտը գլխին՝ արևի ճառագայթների առջև փայլատակում է. մի դիւցազնական շարժուածով նայում է դէպի երկին։ Կամ եթէ կուզես, մի երինջ է, դալարազուարճ մարգագետնի մէջ, զովարար առուակի ափին կանգնած, պլինչը չընկչընկացող քամուն տուած, ագին քիչ բարձր, սիրոյ զմայլման մէջ է։ Կամ երևակայէ (եթէ վերջապէս այդ է ուզածդ) մի տասնութամեայ կոյս, որ պարզաջուր լողանէն նոր դուրս եկած, թեները դէպի եռն բարձրացուցած՝ ուզում է նուրբ կտաւով ծածկուիլ. ինքն իրան մենակ է կարծում. իւր հրապոյրներն անմեղ ընութիւնն պահելու չի չտապում. չը գիտէ թէ այնտեղ, փլի եռն, մեղքը երկու բաց աչքերով դարան է մտած։

Բայց տեսնում ես դու այս գեղանէն հետ վերամբարձ հոյակապ վեհակառոյց լայնաբոլոր գըմբէթը. արևելեան մեծ Արամազդին, թէ արևմտեան Զևսին և Եուպիտերին են երկրպագութիւն արել այդ ահեղաշուք մեհենի մէջ... ոչ, Եհովան յաղթեց. Եհովայինն է այն տաճարը. քրիստոնէից Աստուածն է այդտեղ պաշտուել, սուրբ Փրկիչ է իր անունը։

Ինչու այդպէս հիացած, ապշած, մի տեսակ սուրբ երկիւղի մէջ, մի տեսակ երկրպագութեան պատրաստականութեամբ, կանգնած արձանացած կաս այդ միջնաբերդեան քարափի գլխին։ Օ՛հ. խորհրդաւոր ժայռակղզին է տեսածդ. այդտեղի ճարտարագործը—ամենարուեստ բնութիւնը—իւր չէնքը բարակ օղով քօղել է. եթէ թափանցող աչքեր ունես, կը տեսնես որ այդ դժուարամատոյց ժայռի հիմունքը դժոխքի վրա է դրուած. իսկ լալական Ախուրեան իւր անդունդների մէջ գըրկած ունի այդ ժայռ գահը երեք կողմից. չորրորդ կողմը մի սպառուանդան է երկրի վրա, քաղաքի կողմը։ Այդ կողմէն հողեղէնները առուեստով մուտք են գործել կախարդական կըղզու մէջ. այդ բնաչէն սեղան ժայռի վրա երկրպագեցին Անահտայ, երկրպագեցին Քրիստոսի. այսօր ուրուականների դադարն է. մի փորձեր այնտեղ վեր ելնել, երբ արևը մայրմտին է մօտենում։

Արդ այդ հրաշալիքների առջև սիրտդ լցվում ուռչում է, ինքդ հասակ առնում ու բարձրանում ես, օրինաւոր անձնասիրութիւնը կազդուրում ու զօրացնում է հոգիդ ու մարմինդ, բերդ սղմում ես ազգրներիդ վրա երբ իբրև հայ քեզ նախատողի յիշատակն է մտքովդ անց կենում, երդվում ես՝ փառքով հայանունը որդուդ աւանդելու, իսկ դու նոյն փառքով գերեզման իջնելու։

Այո, Հայ, նախնեացդ քաջութեան և ազգաչէն առաքինութեան աւանդութիւնները, նրանց մեծագործութեան յիշատակարանները, նաև նրանց քաջած և պատմված տառապանքները, և Մասիսդ և Արագած և Գրգուռ, և Եփրատդ և Տիգրիս և Երասխ, Արմաւիրն, Արտաշատն և Անի, Տորոս լեռներն և իւր քաջեր, այդ բոլորը պահել են քեզ քու սրտումդ հայութիւնդ ու ազգութիւնդ. դոցանով ես հայ մնացել. դոցանով ես մնալու։ Ուստի անդադար այդ աւանդութիւնները, յարգէ և մեծարէ յիշատակարանները, սիրէ և պաշտէ հողն ու ջուր. աշխատիր ու թափէ քրտինքդ, այդ քրտինքդ նորից կը ծնանին քաջերդ։ Այդ են երգում քեզ Մասիսդ, Հրազդանդ և Գարունդ երգողները։ Այդ նպատակով քու լուսանկարդ քեզ պարգև Անին է բերում քո սեղանիդ վրա։

Կարդա, ով Հայ, Հայրենեացդ բաները, քննէ տես Հայրենեացդ յիշատակարանները, սիրէ այն ազգատիպ ժողովուրդը որ Մասիսի փէչերի տակ է բնակվում, որ Հայու արևով է երդվում։ Կարդա, քննէ, սիրէ։

Ա. Մ. Ե. Պ.

մէջ ամուսնութեան բոլոր իրաւաբանական պայմանները և հետևանքները։

Ունգարիան կաթոլիկական երկիր է, ուր եկեղեցին բացառապէս կրօնական կէտից է նայում ամուսնութեան վրա, և ուր քաղաքական ամուսնութիւնը թոյլ է տրվում հակառակ նրա (կաթոլիկ եկեղեցու) վարդապետութեան։ Ժամանակը անցնում է և տանում է իր հետ մէկը միւսի ետևից բոլոր այն աւանդութիւնները, հայեացքները և հիմնարկութիւնները, որոնք մի ժամանակ ունէին իրանց գործնական նշանակութիւնը և վեհութիւնը։ Մեր ժամանակում քաղաքական ամուսնութեան գաղափարը վաղուց է արդէն որ դադարել է նորութիւն լինելուց Եւրոպայում և ընդունվում է շատ երկիրներում, բոլորովին չը ՀԱՍԵԼով պետական և ընտանեկան հիմունքներին։

Քաղաքական ամուսնութիւնը պարտաւորեցուցիչ է Ունգարիայում։ Նա կատարվում է, անկախ եկեղեցական ամուսնութիւնից, յայտնի ձևերով, որոնք անհրաժեշտ են պսակի վաւերականութեան համար։ Պսակը քաղաքներում կատարվում է քաղաքապետների ձեռքով, կոմիտատներում —փոխ-գեշպանների ձեռքով և ստանում է իրաւաբանական ակի բոլոր զօրութիւնը, բացի այն դէպքերից, որոնք մանրամասնաբար յիշված են նախագծի մէջ։ Վիճելի դէպքերը քննվում են դատաստանական կարգով. միայն ներքին գործերի մինիստրին է իրաւունք տուած յայտնի ատիճանների մէջ թոյլ տալ պսակներ իր հայացքի համեմատ և համապատասխան օրէնքի ոգուն։

Ամենից հետաքրքիր են նախագծի վճիռները ապահարզանի մասին։ Եթէ ամուսինները փոխադարձ համաձայնութեամբ ժամանակաւոր ապահարզան են ցանկանում, նոքա այդ բանի մասին յայտնում են՝ մի քանիները փոխ-գեշպանին, միւսները — քաղաքապետին։ Վերոյիշեալ պաշտօնական անձինք պարտաւոր են յիշեցնել երկու կողմերին ևս նրանց փոխադարձ խոստմունքը՝ ապրել միասին, և դարձնել նրանց ուշադրութիւնը ապահարզանի ՀԵՏևանքների վրա։ Հաշտութեան այդպիսի փորձերը պէտք է կրկնվեն էլի երկու անգամ, իրաքանչիւր վեց շաբաթ անցնելուց յետոյ մի անգամ, և եթէ հաշտութիւն չը կայանայ, վերոյիշեալ պաշտօնական անձինք երկու կողմերին ևս տալիս են գրաւոր վկայական այն բանի մասին, որ երեք անգամ փորձ փորձելով համոզել նրանց շարունակել իրանց ամուսնական կենակցութիւնը, նրանք այնու ամենայնիւ պնդում են ապահարզան ստանալու վրա։ Ապահարզան պահանջող կողմերը այդ վկայականը ներկայացնում են դատարանին, որը իր կողմից նոյնպէս համոզում է նրանց համաձայնութեամբ կենակցել. բայց եթէ երկու կողմերն ևս դատարանի առաջն էլ բերանացի կը յայտնեն, որ իրանց մէջ կատարեալ համաձայնութիւն է կայացած թէ ապահարզանի և թէ նոյնպէս կայքի և իրանց ապրուստի վերաբերութեամբ, եթէ նրանք, մանաւանդ, անչափահաս երեխաներ չունեն, այն ժամանակ դատարանը անյապաղ հաստատում է պահանջած ապահարզանը։ Եթէ անչափահաս երեխաներ կան, ապահարզան տրվում է միայն այն ժամանակ, երբ երկու կողմերն ևս կապացուցանեն, որ երեխանց ապրուստը ապահոված է նախապէս համաձայնութեամբ յայտնի խնամակալ իշխանութեան հետ։ Ամեն անգամ, երբ ժամանակաւորապէս բաժանվող ամուսինների մէջ կամաւոր համաձայնութիւն չէ կայացած այն բանի մասին, թէ նրանցից ո՞րի մօտ պէտք է մնան երեխաները, այս հարցը վճռում է դատարանը միաժամանակ ապահարզանի խնդրի հետ, օրէնքի մէջ ցոյց տուած կանոնների հիման վրա։

Այն ամուսինները, որոնք իրանց փոխադարձ ցանկութեամբ բաժանվել են, կարող են կրկին միանալ, յայտնելով այդ բանի մասին դատարանին, և եթէ ցանկանում են կրկին բաժանվել, պարտաւոր են ենթարկվել նոյն ձևերին, որոնց մենք իսկոյն յիշեցինք։

Աւելի խիստ է կատարեալ ապահարզանը ամուսինների մէջ, որից յետոյ այլ ևս չէ կարելի նախկին ամուսնական յարաբերութիւններին վերադառնալ։ Ամուսիններից իրաքանչիւրը կարող է դատաստանով կատարեալ ապահարզան պահանջել միայն այն դէպքերում, երբ միւս կողմը կը քանդի ամուսնական հաւատարմութիւնը, երբ ամուսիններից մէկը միւսին կը թողնի և, դատաստանով յիշեցնելուց յետոյ, մէկ տարվայ ընթացքում չի վերադառնայ. երբ որ մէկ կողմը ապառնում է միւսի կեանքին և առողջութեանը և վատ է վարվում նրա հետ, և, վերջապէս, երբ մէկ կողմը հացնում է միւսին ամուսնական հաւատարմութեան խախտելուն, կամ ստիպում է նրան այդ բանը անել։ Կատարեալ ապահարզան կարելի է նոյնպէս, երբ կողմերից մէկը յայտնում է, որ անյաղթելի փոխադարձ զզուանք է տիրում ամուսինների մէջ։ Բայց այս դէպքում դատաւորը պարտաւոր է ժամանակաւորապէս բաժանել նրանց, և այն ժամանակ միայն կարող է ամուսնական կապերը քանդել, երբ որ մի և նոյն յայտարարութիւնը մէկ տարուց յետոյ կը կրկնեն նրանք։

Այս բոլոր դէպքերում ապահարզան ստացած ամուսինները կարող են պսակվել, միայն ոչ թէ այն անձի հետ, որի հետ նրանք, դատաստանով ապացուցված, ամուսնական հաւատարմութիւնը խախտել են։

Այն հազուագիւտ դէպքերում, երբ վերջնականապէս ապահարզան ստացած ամուսինները կարող են ցանկանալ իրանց ամուսնական յարաբերութիւնների վերականգնումն, օրէնքը նայում է դրա վրա որպէս նոր պսակ, և պահանջում է կատարել նորից քաղաքական բոլոր այն ձևերը, որոնք սահմանված են ամեն նոր պսակների համար։

Նախագիծը թոյլ է տալիս նոյնպէս քաղաքական ամուսնութիւնը հրէաների և քրիստոնեաների մէջ։

Աչքի առաջ ունենալով ունգարական այդ նոր նախագծի բովանդակութիւնը, որի մասին այժմ խօսում են և Աւստրիայում, ոչ ոք, ի հարկէ, չէ փախենում այնտեղ ընտանիքի հաստատութեան և բարոյական հիմունքների համար հասարակութեան մէջ. նախագիծը ամուսնական կապերը դնում է այնպիսի ապահովութեան տակ, մինչև անգամ ծանր փականքների մէջ, որոնք անմատչելի են դարձնում նրան, նա բացում է միայն մի փոքրիկ անկիւն, որի մէջ կարող են պատսպարվել այն թշուառ մարդիկը, որոնք դառը փորձով հասկացել են, որ ամուսնութիւնը կարող է նրանց համար միայն յաւիտենական տանջանք լինել։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Ամէնքից լրագիրներին հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները։ Յունաստանը պատրաստականութիւն է յայտնում զիջումներ անել Թիւրքիային, եթէ այս վերջինը կը համաձայնի միացնել Յունաստանի հետ Կրիտ կղզին։ Բայց երևի Բ. Դուռը յիշեալ կղզու փոխարէն մեծ զիջումներ կը պահանջէ։ Այդ պատճառով խաղաղ համաձայնութիւնը Թիւրքիայի և Յունաստանի մէջ շատ կասկածելի է։ Զափաւոր յոյները կամենում են պատերազմի առաջն առնել, բայց երկրի ազգաբնակութեան մեծամասնութիւնը պատերազմ է ցանկանում։ Շատերը հաւատացած են, որ յոյները անպատճառ կը յաղթեն Թիւրքերին, թէպէտ այդպիսի համոզմունքները առանձին հաւանականութիւն չունեն։ Էպիրոսից և Թէսսալիայից ստացված վերջին լուրերի համեմատ տեղական ազգաբնակութիւնը կօգնի յոյներին միայն այն դէպքում, երբ այս վերջիններները կը յաղթեն Թիւրքերին։ Ուրիշ կերպ յոյները պէտք է յոյս չը դնեն Թէսսալիայի և Էպիրոսի մէջ բնակվող իրանց ցեղակիցների վրա։ Յոյների այդ ցեղակիցները մի քանի անաջող ապստամբութիւններից յետոյ շատ հանգիստ են, թէպէտ մի և նոյն ժամանակ չափազանց ցանկանում են ազատվել Թիւրքաց իշխանութենից։ Այնու ամենայնիւ յոյները դրանց վրա մեծ յոյս են դրել։ Յունական ժողովրդի ինքնախաբէութիւնը այն աստիճանի է հասել, որ նա յոյս է դրել կաթոլիկ ալբանցիների օգնութեան վրա։ Այսպիսով Յունաստանը կրկնում է Սերբիայի և Չերնոգորիայի սխալները, որոնք նոյնպէս յոյս ունէին ալբանացիներին իրանց կողմը դարձնել։ Թէ մինչև որ աստիճան այդ կողմից մոլորված էր Չերնոգորիան, կարելի է եզրակացնել այն իրողութենից, որ այդ երկիրը, չը նայելով իր աղքատութեանը, հազար ոսկի ընծայից ալբանցի առաջնորդներից մէկին։ Աւելի խոհեմ յոյները կարծիք են յայտնում, որ պէտք է միայն սեփական ոյժերի վրա յոյս դնել։

Կրիտ կղզուց հաղորդում են Աթէնք, որ այդ կղզին Յունաստանի հետ միացնելու լուրը ոգևորութեամբ ընդունվեցաւ բնակիչների կողմից։ Թէպէտ տեղական Թիւրք վարչութիւնը չափազանց զգուշութեամբ է վարվում բնակիչների հետ, այնու ամենայնիւ մի քանի անկարգութիւններ տեղի են ունենում։ Նորերումս Նէօխօրի քաղաքի մէջ արիւնահեղ կռիւ պատահեցաւ տեղացի յոյների և Թիւրքաց զօրքերի մէջ, որովհետև առաջինները հրաժարվեցան նոր տուրքեր վճարել։ Ապստամբութիւնը պատրաստող գլխաւոր առաջնորդներին տեղական նահանգապետը բանտարկեց, բայց ժողովուրդը յարձակվեցաւ բանտի վրա և ուժով ազատեց նրանց։ Այդտեղ հանգստութիւնը վերականգնվեցաւ միայն այն ժամանակ, երբ քաղաքը նոր զօրքեր և ժանդարմներ ուղարկվեցան։ Իսկապէս այս անգամ Թիւրքերը գործում էին զգուշութեամբ և աշխատում էին չը գրգռել ժողովրդին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բիկոնսֆիլդի առողջութիւնը փոքր ինչ լաւանում է։

—Յունաստանը չէ համաձայնվում եւրոպական պետութիւններից որոշած սահմանական գծի ուղղութեան հետ։

—«Русск. Курьеръ» լրագրին հեռագրում են, որ Պրագայում կը հիմնվի մի չէխական համալսարան։

—Ասում են որ սուլթանը դիմեց Եգիպտոսի խեդիվին, խնդրելով նրան օգնել Թիւրքիային իր զօրքերով եթէ Թիւրքիան ստիպված կը լինի պատերազմել Յունաստանի դէմ։

—«Züricher Ztg» լրագիրը բողոքում է Ցիւրիխում սոցիալիստական կոնգրէսի գումարելու արգելման դէմ։ Շվէյցարիան, ասում է թերթը, չը պէտք է եւրոպական միւս պետութիւնների հաճոյքին զոհի իր հնադարեան իրաւունքները, որոնք հաստատված են իր սահմանադրութեամբ։ Հանրապետական սկզբունքներին համեմատ, աւելացնում է Ցիւրիխի լրագիրը, Շվէյցարիայում բնակվող քաղաքական յանցաւորները չեն կարող յանձնված լինել այլ պետութիւններին։

—Բոլգարիայի Սոֆիա քաղաքում գտնված է նիհիլիստական դաշնակցութեան մի բաժին։

—Ալժիրիայից հաղորդում են որ ֆրանսիական զօրքերի և Տունիսի այլ և այլ ցեղերի մէջ պատահել են մի քանի ծանր կռիւներ։ Նոր ֆրանսիական զօրքեր են կանչված Ալժիրիայից դէպի Տունիսի սահմանները։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիայում ձեռնարկված Աստուածաշնչի վերաքննութիւնը մեր դարի գրականական աշխատանքների մէջ ամենանշանաւորներից մէկն է, որ սկսված է տասը տարի առաջ, իսկ այժմ կիսով չափ միայն վերջացրած է։ «Times» լրագրին Օկսֆորդեան և Կեմբրիջեան համալսարանների տպարաններից հաղորդում են, որ վերաքննված Նոր Կտակարանի թարգմանութիւնը կը դուրս գայ մայիսի կէսին։ Այս սուրբ գրքերի նոր թարգմանութիւնը պատկանում է Կենտրբերիում հաւաքված տասն և վեց գիտնական եբրայագէտներին և եկեղեցու ու համալսարանների անդամներին։ Իրաքանչիւր դժուար խնդիր վճռում են նրանք ձայների բազմութեամբ։ Այս ձեռնարկութեան վրա գնացած բոլոր ծախսերը ընդունեցին իրանց վրա Օկսֆորդեան և Կեմբրիջեան համալսարանները։

* * *

Անգլիական «Blakwood» ամսագիրը մանրամասնաբար հաղորդում է այն բանի մասին, թէ ինչպէս էր աշխատում նորերումս վախճանված մատենագրուհի Ջորջ Էլիոտը։ «Նա ամենաաշխատասէր և ճիշտ գրողներից մէկն էր։ Նրա ձեռագիրները հիանալի կերպով էին գրված, բոլոր տառերը գեղեցիկ էին դուրս բերված, առանց ջնջված տեղերի և բծերի... Նա ոչ մէկ փաստ, ոչ մէկ տպաւորութիւն չէր վերցնում ուրիշից, մինչև ինքը չը հետազօտէր. այդ պատճառով, չը նայելով իր բազմաթիւ և զանազանակերպ օրինակներին և համեմատութիւններին, նրան շատ հաղիւ էր պատահում իր գրուածքները ուղղել սրբագրութեան մէջ։» Շուտով կը դուրս գայ Ջորջ Էլիոտի կենսագրութիւնը, որ գրել է նրա երկրորդ ամուսինը—Կրօսս։

* * *

Փարիզի «Variété» թատրոնում օրերումս հետևեալ անցքը պատահեց։ Տիկին Ժիւդիկի փարիզցիների սիրած մէկ բօմանսը երգելու ժամանակ, երկրորդ կարգի մէկ լօժայից հրացան արձակվեցաւ։ Այդ բանը մէկ այնպիսի սարսափ տարածեց բոլոր հասարակութեան վրա, որ շատերը սկսեցին փախչել, և դահլիճի մէջ ընդհանուր խռովութիւն ընկաւ։ Տիկին Ժիւդիկ ուշաթափ ընկաւ պ. Դիւպլիի ձեռքերի վրա։ Յայտնվեցաւ, որ այդ խռովութեան պատճառը մէկ 17 տարեկան երիտասարդ էր, որ կամենում էր անձնասպանութիւն գործել։ Երիտասարդը հրաժարվեց որ և է բացատրութիւն տալուց պոլիցիականներին տալով. «դուք ինձ չէք հասկանայ։» Բարեբաղդաբար նա թեթև վերք ստացաւ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մարտի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 93 ր. 37 կ., երրորդ 93 ր. 75 կ., չորրորդ 93 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 224 ր. երկրորդ 217 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 92 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 50 կ., երրորդ 92 ր. 50 կ., ոսկի 7 ր. 95 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 24,71 պէնս, Ամստերդամի վրա 125 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 211 մարկ, Փարիզի վրա 261 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանդիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է „Կենտրոնական“ և պ. Զ. Գրիգորեանցի „Կովկասեան“ գրավաճառանոցներում „Մտաւոր, ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին“ հեղ. Զօն Սթիւարտ Բլէկկի. թարգմ. Գրիգոր Շահբուդաղեանի. գինն է 60 կոպէկ։ Օտարաքաղաքացիք կարող են ուղղակի թարգմանչին դիմել այս հասցէով՝. Въ Тифлисъ, Учителю Армянской Духовной Семинаріи Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцу.

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է թարգմանչի հետևեալ աշխատութիւնը. „Մայրական Դաստիարակութիւնը, բնութեան օրէնքց վերայ հիմնուած“. հեղ. Ժ. Բամբոսսոնի։

վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխայուսի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։ 42—100

ՆՈՐ ՏՊԱՐԱՆ

ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԵՆՑ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՆՈՎՍԿԱՅԻ ՓՈՂՈՑ, տուն **ԽՇԽ. ԲԷՀԲՈՒԹՈՎԻ**

Այս օրերս բանալով **ԹԻՖԼԻԶՈՒՄ** լիակատար **ՏՊԱՐԱՆ** իւր ամէն պարագայութիւնքը, ընդունում եմ տպելու **ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ** և ամէն տեսակ պատուէրներ. այն է՝ **ԳՐՔԵՐ, ԼՐԱԳՐԵՐ, ԱՄՍԱԳՐԵՐ, ԲԼԱՆԿՆԵՐ, ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿՆԵՐ. ՀԱՇՈՒԻ ՏԵՏՐԱԿՆԵՐ, ՏՈՄՍԱԿՆԵՐ, ՁԱՅԻ ԵՒ ԾԽԱԽՈՏԻ ԵԱՌԼԻԿՆԵՐ** (զանազան գոյների) և այլն։

Տպագրութեան մաքրութեանը և տպարանական կանոնների ճշտութեանը համար **ԻԲՐԵԻ ՄԱՍՆԱԳԷՏ** պատասխանատու եմ լինում միշտ։ **ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ** կը կատարուին **ԿԱՐՃ ՄԻԶՈՑՈՒՄ, ԱՄԵՆԱՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ**։ 5—5 (2)

Ստեփան **ԵՐԱՄԵԱՆՑ** ունի պատիւ յայտնելու որ նա ընդունում է **ՎԻԷՆՆԱՅՈՒՄ** կատարելու ամէն տեսակ առևտրական և այլ **ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**։

Հասցէն։ ВѢНА (Австрія) St. Jeramjanz, Hôtel Schröder. WIEN, II.

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ գործարանական գներով **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ **ԱՐԾՐՈՒՆՈՒ** գալերէյում։ Նոյն տեղը ծախվում են անգլիական ֆիլտրաներ, մանանեխ, օսլայ (կրախմալ), կակաո, շօկոլադ, բաժակներ և դէմքը գեղեցկացնելու համար ծրծմբէ, կաթնի, նուշի և զլիցերինի իւղ։ Հրացաններ նոր ձևի։

12—12

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ծախվում են հազի դէմ **ԿՕՆՖԵԿՏՆԵՐ** 40 կ. ֆունտը, խինայի գինի ջերմի դէմ 1 ր. 50 կ. շիշը, պարսկական **ՇԵՐԲԵԹ**, ցիտրադ մագնեզիայի ծարաւի դէմ 70 կ., ամենալաւ **ԿՕՆԵԱԿ** 2 ր., հին **ՊՕՐՏ-ՎԷՅՆ ԵՒ** խերես 1 ր. 40 կ., **ՄԵԼՐԱՄՕՄ** և չոր **ՍԱՊՕՆ** և այլն։ 12—15

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է „Կենտրօնական“ ու „Կովկասեան“ գրավաճառանոցներում **ՄՕԼԻԷՐԻ „ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՐԱՏ“, ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ**։ Գինն է 30 կ.։

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Թիֆլիսի Հայ գրավաճառների մօտ Կ. Կոստանեանցի „Գրաբառ բայերի ԽՈՆԱՐՀՈՒՄԸ մի աղիւսակի մէջ, գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար“։ Գինը՝ հատով՝ 25 կոպ., գումարով՝ 20 կ.։

Այս գրքոյկը պարունակելով իւր մէջ բայերի մի պարզ նախադիտելիք, յանգերի, օրինակների և խոնարհմանց ամփոփ աղիւսակներ՝ շատ հեշտացնում է աշակերտաց գրաբառ բայերի ուսումը։ Ի նկատի ունենալով գործի օգտակարութիւնը և գնի թեթևութիւնը համարձակ կարելի է խորհուրդ տալ գրաբառ ուսանող աշակերտաց ձեռք բերելու յիշեալ երկասիրութիւնը։

Նոյն հեղինակի „Հիւսուածք հայ պատմագրաց“, 3 հատոր (3 ր.) և „Հայոց հեթանոսական կրօնը (30 կ) կարելի է նոյնպէս թիֆլիսի գրավաճառներից կամ ուղղակի հեղինակից ստանալ։

ԵՂ. ՍԱԼԻ-ՕՂԼԻ ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ։ Ի նկատի առնելով, որ մի քանի ժամանակից թիֆլիսի ծխախոտի շատ **ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐ** լաւ առևտուր չունենալով, իրանց թոյլ են տալիս **ԿԵՂԾԵԼ** իրանց արդիւնաբերութեան **ԴՐՕՇՄՆԵՐԸ**, որոնք արտաքուստ նմանութիւն են ունենում մեր դրօշմների հետ և զրպարտներն էլ նրանց դժուար կը զանազանեն, մեր գործարանը հարկաւոր է համարում **ԶԳՈՒՇԱՑՆԵԼ** գնողներին և առաջարկել նրանց, որ գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնեն մեր **ՖԻՐՄԱՅԻ** վրա. „**ԹԻՒՐՔԱՑ ՀՊԱՏԱԿ ԵՂԲԱՐՔ ՍԱԼԻ-ՕՂԼԻ**“։

Գործարան **ՍԱԼԻ-ՕՂԼԻ**

1—3

144 Արծրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Ձը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն. **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի։ Անգլիական բէվոլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջնտաոնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, ցուրնօրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաոշօկոլադի ծախելու համար, որոնք փարիզի հանդէսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱՒԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Պաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հագուստ 15 ր., կօնֆեկտներ հազի դէմ 60 կ. ֆունտը։ 51—100

Մամուլի տակից դուրս եկան և վաճառվում են կենտրօնական գրավաճառանոցում հետևեալ գրքերը. Հենչէլի բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ, ծխական դպրոցների համար. փոխադրեց Ս. Մանդինեան 1-ն և 2-րդ տարի. Թիֆլիս 1881 գ. 40 կ.

Գրաբար բայերի խոնարհումը մի աղիւսակի մէջ. գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար. յօրինեց Կ. Կոստանեանց, Թիֆլիս, գ. 25 կ.

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ գրքերը.

Սիրաք և Սամուէլ։ Բարի հօր կրթական դասեր։ Գրեց Խրիմեան Հայրիկ Կ. Պոլիս գ. 1 ր. 25 կ.

Լ. Զէսարֆիլլի խրատ առ որդին իւր. Վենետիկ գ. 75 կ.

Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ Գ. Վ. Սրուանձտեանց Կ. Պոլիս գ. 1 ր. 25 կ.

Թուղթ Մարկոսի Աղարէգեանց։ Հայոց աշխարհի, ազգի և եկեղեցու ազգայնութեան մասին առ պատուականաց պատուական Տէր Ներսէս պարիարք Հայոց Կ. Պոլիս գ. 2 ր. 25 կ.

Պարոնեան, Ազգային ջոջեր 3 հատոր, Կ. Պոլիս գ. 3 ր. 5 կ.

Մանանայ։ Ժողովեաց և ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց Կ. Պոլիս գ. 1 ր. 75 կ.

Տարերք իմաստասիրութեան ընդարձակ Ի. Հ. Աւք. Վ. Գուրգենեան 5 հ. Կ. Պոլիս գ. 3 ր. 50 կ.

Խորհրդական բերդը։ Վիպասանութիւն Ֆօժէր օր. Գաղիացւոյ, Վենետիկ գ. 1 ր.

Լճակիս ձկնորսը, յօրինեց Հ. Ց. Վ. Իսավերտեանց։ Վենետիկ գ. 1 ր.

Միսնասարեանց. Փնար Հայկական Ս. Պ. Բ. գ. 1 ր. 30 կ.

Մուզայք Հայաստանի։ Նոր երգարան Թիֆլիս գ. 50 կ.

Բառարան ի ռուսաց լեզուէ ի Հայ. աշխ. Գ. Երեցփոխեանց Թիֆլիս գ. 4 ր.

Օտարաքաղաքացիք ճանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր ր. համար 10 կ. պատուէրները պէտք է ուղարկվեն այս հասցէով „Въ Тифлисъ, въ Центральную Книжную торговлю“.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐ

1. Ա. Մ. Ե. Պ. — Դիւցազունք ըստ խորենացւոյը Հայկ, Արամ, Վահագն. պատկերներ պատմական կեանքից։ Տփխ. 81 թ. գինն է 30 կ.։

2. Կոստանեանց. Կ.—Գրաբառ բայերի խոնարհումը մի աղիւսակի մէջ. գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար. գինն է 25 կ.։

3. Երզնկեանց Եղ. քհնյ. — Խմբական ձայնագրեալ ազգային երգեր (սակաւաթիւ) 50 կ.։

4. Մօրիս բլօք— փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան. թարգմանեց զանազան փոփոխութիւններով Ս. Պալասանեանց 50 կ.։

5. Մովսէսի խորենացւոյ պատմութիւն Հայոց 80 կ.։

6. Զօն Սա. Բլեկկի—մտաւոր, ֆիզիքական և բարոյական ինքնակրթութիւն 60 կ.։

Մամուլի տակ են

1. Ծերենցի— Թէոդորոս Ռշտունի

2. — Թորոս Լեռնի (2-րդ տարպագրութիւն)

3. Գամառ-քաթիպայի—մանկական երգեր և ոտանաւորներ։

2—12

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ։ Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պանտատօրներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով։ Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաո և շօկոլադ-ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամէն տեղ, անկողիններ, հրացաններ, բէր վոլվէրներ, կողպէքներ, մատուցարաններ, ամանեղներ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թասքեր, գուլպանեկանց և տղամարդկանց, թաշկինակներ-մանկինտօշներ, կալենկօր, թուղթ, մատիաներ, տետրակներ, գրիչներ ամէն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։ Արծրունու գալէրէում։ 100—74

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Марта 1881 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.